ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի մարտի 21-ի № ՀՕ-91-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Օրենքի 27-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասում «քարտում:» բառից հետո լրացնել «Կարգապահական տույժ տալու մասին գրավոր հրամանը և զինծառայողի հաշվառման (ծառայողական) քարտում կատարված գրառումը ստորագրությամբ ներկայացվում է զինծառայողի ծանոթացմանը: Զինծառայողի պահանջի դեպքում նրան տրամադրվում է նաև կարգապահական տույժ տալու մասին գրավոր հրամանի և զինծառայողի հաշվառման (ծառայողական) քարտում կատարված գրառման՝ հրամանատարի կողմից հաստատված պատճենները:» նախադասությունները:

2) 5-րդ մասում «իրավունք ունի» բառերից հետո լրացնել «ծառայողական քննությանը մասնակցելու պահից ծանոթանալու իր իրավունքներին և պարտականություններին,» բառերը, իսկ «բողոքարկելու:» բառից հետո լրացնել «Ծառայողական քննություն իրականացնող անձը կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող զինծառայողին գրավոր բացատրում է սույն օրենքով նրան վերապահված իրավունքները և պարտականությունները, որոնց կապակցությամբ կազմված արձանագրությունների տակ նրանք նշում են կատարում և ստորագրում:» նախադասությունը:

Հոդված 3. Օրենքի 28-րդ հոդվածի «կարող են հայտարարվել» բառերը փոխարինել «հայտարարվում են» բառերով:

Հոդված 4. Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին, 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերից հանել «որպես խրախուսանք» բառերը:

Հոդված 5. Օրենքի 31-44-րդ հոդվածներում «արտահերթ» բառից առաջ լրացնել «աշխատանքի» բառը:

Հոդված 6. Օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասում «զեկուցագրում:» բառից հետո լրացնել լրացնել «Զինծառայողի կողմից իր նկատմամբ կիրառված կարգապահական տույժը բողոքարկելու արդյունքում վերադաս հրամանատարը (պետը) իրավունք ունի կայացնելու կարգապահական տույժը հանելու կամ ուժի մեջ թողնելու մասին որոշում:» նախադասությունը:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

✓ Օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք է համարվում իրավախախտում կատարելը նախկինում հանցագործություն կատարած անձի կողմից:

Օրենսդրական կարգավորումից ստացվում է, որ զինծառայողի կողմից կատարված կարգապահական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք դիտարկվում է իրավախախտում կատարելը նախկինում հանցագործություն կատարած անձի կողմից: «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիր չի կարող կնքվել այն անձանց հետ, ովքեր դատապարտվել են հանցագործություն կատարելու համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ: Նույն օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ազատազրկման հետ չկապված պատժի դատապարտված զինծառայողը չի կարող բարձր պաշտոնի նշանակվել մինչև դատվածությունը հանելը կամ մարելը:

Այսինքն, ինչպես բխում է վերը նշված օրենսդրական դրույթների տառացի մեկնաբանությունից, զինծառայողի նկատմամբ ավելի խիստ կարգապահական տույժ կիրառելը պայմանավորվում է նախկինում հանցագործություն կատարած լինելու փաստով՝ անգամ անձի դատվածությունը հանված կամ մարված լինելու պայմաններում: Այս առումով, հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ դատվածությունը հանելը կամ մարելը վերացնում է

դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները: ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն՝ դատվածությունը հաշվի է առնվում հանցագործության ռեցիդիվի դեպքում և պատիժ նշանակելիս:

Հետևաբար՝ վերը նշված բոլոր իրավակարգավորումների համաձայն՝ դատվածության հանված կամ մարված լինելը վերացնում է զինծառայողի համար որևէ իրավական հետևանքի առաջացման հնարավորությունը, այդ թվում՝ նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացքում նախկինում հանցագործություն կատարելը՝ որպես ծանրացնող հանգամանք դիտելու հնարավորությունը:

Կարծում ենք, որ այսպիսի կարգավորման պայմաններում, երբ հանցագործություն կատարած լինելու փաստը քրեաիրավական հետևանքների բացառմամբ, այդուհանդերձ, հաշվի է առնվում վերջինիս կարգապահական իրավախախտմանը գնահատական տալիս և համապատասխան կարգապահական տույժ կիրառելիս, չի բխում օրինականության, արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքներից:

Բանն այն է, որ կրկնակի դատապարտման արգելքի պայմաններում հանցագործություն կատարած լինելու փաստը հաշվի է առնվում ոչ միայն քրեական օրենքի կիրառության շրջանակներում, այլև քրեաիրավական հարաբերություններից դուրս՝ անձի իրավունքների այլ սահմանափակման, տվյալ դեպքում՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելիս: Բացի այդ, այդպիսի կարգավորումը խնդրահարույց է օրենքի առջև բոլորի ընդհանուր հավասարության և խտրականության արգելման սահմանադրական սկզբունքների տեսանկյունից:

✓ Օրենքի 27-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ զինծառայողն իրավունք ունի իրեն տրված կարգապահական տույժը բողոքարկելու ըստ վերադասության:

Ըստ նույն օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի՝ իր նկատմամբ կիրառված կարգապահական տույժը զինծառայողը կարող է բողոքարկել տույժի մասին իրեն հայտարարվելու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

Մինչդեռ Օրենքում բացակայում է կարգապահական տույժ տալու մասին հրամանը զինծառայողին տրամադրելու կամ հայտարարելու իմպերատիվ իրավական նորմը:

Այսպես՝ Օրենքի 28-րդ հոդվածը կարգապահական տույժերի կիրառման կարգը սահմանելիս ամրագրում է, որ բոլոր կարգապահական տույժերը «կիրառվում են հրամանով և կարող են հայտարարվել անհատապես կամ համապատասխան շարքի առաջ»:

Հետևաբար՝ հրամանատարը զինծառայողին կարգապահական տույժ տալու մասին հրամանը հայտարարելու պարտականություն չունի և պատասխանատվություն չի կրում հրամանը չհայտարարելու կամ զինծառայողին այն չծանոթացնելու համար: Նման պայմաններում զինծառայողը փաստացի զրկվում է Օրենքի 27-րդ և 47-րդ հոդվածներով սահմանված տույժի բողոքարկման իրավունքից:

✓ Օրենքի 27-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ զինծառայողն իրավունք ունի իրեն տրված կարգապահական տույժը բողոքարկելու ըստ վերադասության՝ սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով:

Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինծառայողն իրավունք ունի իր նկատմամբ կիրառված կարգապահական տույժը բողոքարկելու կամ այլ զինծառայողների կողմից անօրինական ու անարդար գործողություններ կատարելու մասին վերադաս հրամանատարներին (պետերին) ներկայացնելու զեկուցագիր:

Զեկուցագրի մասին որոշումներն ընդունվում են անհապաղ, բայց ոչ ուշ, քան 15-օրյա ժամկետում: Օրենքով սահմանվել է նաև, որ զեկուցագիր ներկայացրած զինծառայողի նկատմամբ անօրինական կամ անարդար գործողություններ կատարած կամ անգործություն թույլ տված հրամանատարը (պետը) ենթակա է սույն օրենքով նախատեսված պատասխանատվության, եթե նրա գործողությունները կամ անգործությունը չեն առաջացնում քրեական պատասխանատվություն:

Ամրագրելով զինծառայողի՝ իր նկատմամբ կայացված որոշումների կամ գործողությունների վերաբերյալ զեկուցագիր ներկայացնելու իրավունքը՝ Օրենքը, սակայն, լիարժեք չի ամրագրում այն որոշումների տեսակները, որոնք կարող են կայացվել վերադասի կողմից զեկուցագրի քննարկման արդյունքում: Այսպես, օրինակ, օրենքի խախտմամբ կարգապահական տույժ տալու մասին որոշումը զինծառայողի կողմից զեկուցագրով բողոքարկման դեպքում, համաձայն Օրենքի 47-րդ հոդվածի 5-րդ մասի, վերադաս

հրամանատարը պետք է քննարկի և 15-օրյա ժամկետում որոշում կայացնի: Մինչդեռ, Օրենքի 47-րդ հոդվածի կարգավորումներից ստացվում է, որ վերադաս հրամանատարը, հայտնաբերելով օրենքի խախտմամբ զինծառայողի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու հանգամանքը, բացի այն նշանակող հրամանատարի նկատմամբ ծառայողական քննություն նշանակելու իրավասությունից, այլ որոշում չի կարող ընդունել: Մինչդեռ, զինծառայողի՝ իր նկատմամբ կայացված անօրինական որոշման կամ գործողության արդյունքում խախտված իրավունքների լիարժեք վերականգնման տեսանկյունից, կարևոր է ոչ միայն օրենքի պահանջների խախտում թույլ տված անձանց պատասխանատվության ենթարկելը, այլ այդպիսի խախտման անմիջական՝ զինծառայողի համար բացասական հետևանքների վերացումը: Օրինակ՝ վերադաս հրամանատարը բողոքի քննարկման հիման վրա կարող է կայացնել «Կարգապահական տույժը հանելու մասին» որոշում: Հետևաբար, առաջարկվում է Օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել այն կարգավորմամբ, որ հստակ սահմանվի որոշումների տեսակները, որոնք բողոքարկման արդյունքում կարող են ընդունվել վերադաս հրամանատարի կողմից:

Ընդ որում, հարկ է նկատել, որ Օրենքի 30-րդ հոդվածի կարգավորման համաձայն՝ կարգապահական տույժը կարող է հանված համարվել միայն այն դեպքերում, երբ լրացել են կարգապահական տույժը կրելու ժամկետները կամ որպես խրախուսանք կարգապահական տույժը հանվելու դեպքում:

Նշված տրամաբանությամբ անհրաժեշտ է փոփոխություններ կատարել նաև Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին, 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերում, որոնցում սահմանված են միայն որպես խրախուսանք կարգապահական տույժը հանելու դեպքերը: Արդյունքում՝ հնարավոր կլինի նշված դրույթները կիրառելի դարձնել նաև բողոքարկման արդյունքում կարգապահական տույժը հանելու դեպքերում:

✓ Օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ զինծառայողը, որի նկատմամբ նշանակված է ծառայողական քննություն, իրավունք ունի ծառայողական քննության անցկացման ժամանակ ծանոթանալու իր մասնակցությամբ կատարված գործողությունների ընթացքի, բովանդակության, արդյունքների վերաբերյալ կազմված փաստաթղթերին և դրանց

կապակցությամբ ներկայացնելու առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, ինչպես նաև մինչև ծառայողական քննության ավարտը ծանոթանալու ծառայողական քննության նյութերին, ներառյալ՝ ծառայողական քննության արդյունքներով կազմված եզրակացությանը, սույն օրենքով սահմանված կարգով այն բողոքարկելու:

«Ծառայողական քննություն նշանակելու իրավունք ունեցող հրամանատարների (պետերի) անվանացանկը և ծառայողական քննության անցկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանի (այսուհետ՝ Հրաման) հավելվածով հաստատված ծառայողական քննության կարգի 26-րդ կետի համաձայն՝ կարգապահական իրավախախտում կատարելու մեջ մեղադրվող զինծառայողն իրավունք ունի ծառայողական քննությանը մասնակցելու պահից ծանոթանալու իր իրավունքներին և պարտականություններին, ինչը վավերացվում է իր ստորագրությամբ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից զորամասեր այցելությունների ընթացքում ուսումնասիրվել են Կանոնագրքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զինծառայողների նկատմամբ անցկացված ծառայողական քննությունների համապատասխանությունը Հրամանի պահանջներին:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ ծառայողական քննությունների ընթացքում խախտվում են զինվորական կարգապահության ապահովման սկզբունքները և Հրամանով սահմանված ընթացակարգը:

Մասնավորապես՝ զորամասերում ծառայողական քննության իրականացման ընթացքում զինծառայողները գերակշիռ դեպքերում չեն ծանոթացվում իրենց իրավունքներին և պարտականություններին: Ծառայողական քննությունների ուսումնասիրված ոչ մի փաստաթղթում զինծառայողի ստորագրությամբ չեն վավերացվել իր իրավունքներին ու պարտականություններին ծանոթանալը:

Մասնավորապես, արձանագրվել են դեպքեր, երբ զինծառայողին չեն ներկայացվել Կանոնագրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ իր նկատմամբ կիրառված կարգապահական տույժի մասին իրեն հայտարարվելու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա

ժամկետում բողոքարկելու իրավունքը, Հրամանի 26-րդ կետով սահմանված մեղադրանքին ծանոթանալու, բացարկ հայտնելու, ծառայողական քննության ցանկացած փուլում միջնորդություններ ներկայացնելու, առանձին գործողություններ կատարելու, ինչպես նաև ծառայողական քննության նյութերին լրացուցիչ փաստական տվյալներ կցելու իրավունքները և այլն:

Ծառայողական քննություններով որևէ զինծառայող որևէ առարկություն, միջնորդություն կամ բացարկ չի ներկայացրել ծառայողական քննություն իրականացնող անձանց, ինչպես նաև չի բողոքարկել իր նկատմամբ կիրառված կարգապահական տույժը:

Հետևաբար, կարծում ենք առաջարկվող օրենսդրական փոփոխությունները գործնականում կերաշխավորեն կարգապահական վարույթի ընթացքում զինծառայողների իրավունքների լիարժեք իրացումը:

✓ Օրենքի 23-րդ հոդվածով սահմանված՝ զինծառայողներին տրվող կարգապահական տույժերի ցանկում, ի թիվս այլ կարգապահական տույժերի, սահմանված է նաև «աշխատանքի արտահերթ վերակարգի նշանակում՝ մինչև 5 վերակարգ» կարգապահական տույժը:

Նույն օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է նաև նշված կարգապահական տույժի կիրառման կարգը:

Մինչդեռ, Օրենքի հատուկ մասում կարգապահական իրավախախտումների տեսակները և դրանց կատարման համար կարգապահական տույժեր սահմանող 31-44-րդ հոդվածներում նշված կարգապահական տույժը ձևակերպված է. «արտահերթ վերակարգի նշանակմամբ»:

Հարկ է նշել, որ «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքը տարբերակում է վերակարգի երկու տեսակ՝ աշխատանքի վերակարգ (հոդվածներ 269, 270) և օրվա վերակարգ (հոդվածներ 262-268):

Հետևաբար՝ Օրենքի 31-44-րդ հոդվածներով սահմանված կարգապահական տույժի տեսակը չի համապատասխանում նույն օրենքի 23-րդ հոդվածով ամրագրված կարգապահական տույժի տեսակին: Իրավակիրառ պրակտիկայում իրավախախտում կատարած զինծառայողի նկատմամբ որպես կարգապահական պատասխանատվության

միջոց կարող է կիրառվել ինչպես «օրվա արտահերթ վերակարգ», այնպես էլ «աշխատանքի արտահերթ վերակարգ» կարգապահական տույժերը:

Առաջարկվող կարգավորման բնույթը

✓ Նախագծով ներկայացվել են առաջարկներ՝ ուղղված վերը նշված նկատառումների և առկա խնդիրների լուծմանը: Մասնավորապես առաջարկվում է Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը ճանաչել ուժը կորցրած՝ օրենքի առջև հավասարության սկզբունքի անշեղ պահպանման համար:

✓ Առաջարկվում է Օրենքի 28-րդ հոդվածում «կարող են հայտարարվել» բառերը փոխարինել «հայտարարվում են» բառերով՝ այդպիսով ապահովելով զինծառայողի կողմից Օրենքի 27-րդ և 47-րդ հոդվածներով սահմանված տույժի բողոքարկման իր իրավունքի իրացումը: Սույնի վերաբերյալ առաջարկվում է նաև Օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Կարգապահական տույժ տալու մասին գրավոր հրամանը և զինծառայողի հաշվառման (ծառայողական) քարտում կատարված գրառումը ստորագրությամբ ներկայացվում է զինծառայողի ծանոթացմանը: Զինծառայողի պահանջի դեպքում նրան տրամադրվում է նաև կարգապահական տույժ տալու մասին գրավոր հրամանի և զինծառայողի հաշվառման (ծառայողական) քարտում կատարված գրառման՝ հրամանատարի կողմից հաստատված պատճենները:

✓ Առաջարկվում է Օրենքի 31-45-րդ հոդվածներում «արտահերթ» բառից առաջ լրացնել «աշխատանքի» բառը՝ յուրաքանչյուր դեպքում սահմանելով վերակարգի թիվը:

✓ Առաջարկվում է Օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել այն բովանդակությամբ, որ 47-րդ հոդվածով սահմանված կարգով զինծառայողի կողմից իր նկատմամբ կիրառված կարգապահական տույժը բողոքարկելու արդյունքում վերադաս հրամանատարը (պետը) իրավունք ունենա կայացնելու կարգապահական տույժը հանելու կամ ուժի մեջ թողնելու մասին որոշում: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է սահմանել ապօրինի

նշանակված և կիրառված կարգապահական տույժը բողոքարկման արդյունքում հանելու՝ վերադաս հրամանատարի լիազորություն:

✓ Անհրաժեշտ է կարգապահական իրավախախտում կատարելու մեջ մեղադրվող զինծառայողին ծառայողական քննությանը մասնակցելու պահից ծանոթացնել իր իրավունքներին և պարտականություններին:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասում՝

1) «իրավունք ունի» բառերից հետո ավելացնել «ծառայողական քննությանը մասնակցելու պահից ծանոթանալու իր իրավունքներին և պարտականություններին» բառերը:

2) լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Ծառայողական քննություն իրականացնող անձը կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող զինծառայողին գրավոր բացատրում է սույն օրենքով նրան վերապահված իրավունքները և պարտականությունները, որոնց կապակցությամբ կազմված արձանագրությունների տակ նրանք նշում են կատարում և ստորագրում»:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է կարգավորել ոլորտում առկա, սույն հիմնավորմամբ ներկայացված օրենսդրական բացերը և խնդիրները:

ՏԵՂԵԿԱՆՔ

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունել անհրաժեշտ չէ:

ՏԵՂԵԿԱՆՔ

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 991-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում ծառայողական քննության անցկացման կարգը կանոնակարգելու նպատակով՝

Հրամայում եմ՝

1. «Ծառայողական քննություն նշանակելու իրավունք ունեցող հրամանատարների (պետերի) անվանացանկը և ծառայողական քննության անցկացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N 991-Ն հրամանի (այսուհետ՝ Հրաման) 7-րդ կետը լրացնել նոր 9.1-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ՝.

«զինծառայողների կողմից իրավախախտում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գրավոր հաղորդման.»:

2. Հրամանը լրացնել հետևյալ բովանդակությամբ 28.1-րդ, 28.2-րդ, 28.3-րդ, 28.4-րդ, 28.5-րդ, 28.6-րդ և 28.7-րդ կետերով ՝.

«28.1. Ծառայողական քննություն իրականացնող անձն այն ամբողջությամբ կամ համապատասխան մասով կարող է կասեցնել՝

ա) զինծառայողի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության քննարկմանն ուղարկված նյութերով, հետաքննության և նախաքննության այլ մարմիններում քննվող նյութերով կամ քրեական գործերով մինչև համապատասխան որոշում կայացնելը կամ մինչև զինծառայողի նկատմամբ կայացրած դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը.

բ) եթե հայտնի չէ զինծառայողը, ով այդ գործով պետք է ենթարկվի կարգապահական տույժի.

գ) եթե հայտնի չէ կարգապահական տույժի ենթակա զինծառայողի գտնվելու վայրը.

դ) եթե կարգապահական տույժի ենթակա զինծառայողը ծանր հիվանդ է կամ գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, և առանց նրա մասնակցության հնարավոր չէ լուծել ծառայողական քննության վերջնական ընթացքը.

ե) եթե գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է ծառայողական քննության կատարմանը.

զ) եթե զինծառայողի կողմից իրավախախտում կատարելու մասին հաղորդումը (դիմումը) միաժամանակ հասցեագրված է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանությանը, Հայաստանի Հանրապետության դատախազությանը կամ Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությանը:

28.2. Սույն հրամանի 28.1-րդ կետով նախատեսված հիմքերի վերացվելու դեպքում ծառայողական քննությունը վերսկսվում է: Ծառայողական քննության ժամկետի մեջ չի հաշվվում այն ժամանակը, որի ընթացքում այն կասեցվել է: Ծառայողական քննությունը վերսկսելուց հետո այն ավարտվում է ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում: Սույն կետի 1-ին մասի «բ» և «գ» կետերով նախատեսված հիմքերով ծառայողական քննությունը կասեցված լինելու դեպքում ծառայողական քննություն իրականացնող անձը կարող է լրացուցիչ բացատրություններ վերցնել կամ նյութերով այլ անհրաժեշտ գործողություններ կատարել՝ առանց ծառայողական քննությունը վերսկսելու:

28.3. Սույն հրամանի 28.1-րդ կետի «բ», «գ» և «դ» ենթակետերով նախատեսված հիմքերով ծառայողական քննությունը կարող է կասեցվել առավելագույնը մեկ տարի ժամանակով:

28.4. Ծառայողական քննության անցկացման ընթացքում ծառայողական քննության նյութերը Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայություն կամ Ոստիկանություն ուղարկելու դեպքում ծառայողական քննություն իրականացնող անձը այդ մասին գրավոր տեղեկացնում է այն քաղաքացուն, կազմակերպությանը կամ պաշտոնատար անձին, ումից ստացվել է դիմումը կամ հաղորդումը»:

28.5. Ծառայողական քննությունը ցանկացած փուլում դադարեցվում է, եթե՝

ա) կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող զինծառայողը մահացել է, և կարգապահական պատասխանատվության ենթակա այլ զինծառայողներ չկան.

բ) կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող զինծառայողի արարքում բացակայում են կարգապահական խախտման հատկանիշները.

դ) կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող զինծառայողի մասնակցությունը կարգապահական խախտման կատարմանն ապացուցված չէ, և սպառված են նոր փաստական տվյալներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները.

ե) լրացել է ծառայողական քննությունը կասեցնելու առավելագույն ժամկետը:

28.6. Ծառայողական քննությունը դադարեցնելու վերաբերյալ ծառայողական քննությունն իրականացնող անձը կազմում է եզրակացություն, որը ներկայացվում է ծառայողական քննություն նշանակած անձի քննարկմանը:

28.7. Ծառայողական քննություն նշանակած անձը քննարկում է եզրակացությունը և կայացնում համապատասխան որոշում:»:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 991-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

ՀՀ պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանի երկրորդ հավելվածով հաստատված ծառայողական քննության անցկացման կարգի 6–րդ կետով սահմանված են ծառայողական քննության նշանակման հիմքերը:

Հավելվածի 7-րդ կետով սահմանված են նաև այն դեպքերը, երբ ծառայողական քննության նշանակումը պարտադիր է:

Նշված երկու կետերում բացակայում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաղորդման հիման վրա ծառայողական քննություն նշանակելու դեպքը:

Օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն, ի թիվս այլնի, ծառայողական քննություն նշանակելու առիթ է նաև ոստիկանության ծառայողի կողմից իրավախախտում կատարելու մասին Մարդու իրավունքների պաշտպանի հաղորդումները:

Հրամանում բացակայում են ծառայողական քննությունն առանց տույժ նշանակելու դադարեցնելու, ծառայողական քննությունը կասեցնելու և վերսկսելու հետ կապված կարգավորումները:

Առաջարկվող կարգավորման բնույթը

Առաջարկվում է Հրամանի երկրորդ հավելվածի 6-րդ կետը լրացնել նոր ենթակետով, համաձայն որի՝ զինծառայողների կողմից իրավախախտում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գրավոր հաղորդումը հանդիսանում է ծառայողական քննության անցկացնելու հիմք:

Առաջարկվում է Հրամանը լրացնել նոր՝ 28.1-րդ, 28.2-րդ, 28.3-րդ, 28.4-րդ, 28.5-րդ, 28.6-րդ և 28.7-րդ կետերով, որոնց արդյունքում կսահմանվեն ծառայողական քննությունն առանց տույժ նշանակելու դադարեցնելու, ծառայողական քննությունն կասեցնելու և վերսկսելու հիմքերը և ընթացակարգը:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է կարգավորել ոլորտում առկա, սույն հիմնավորմամբ ներկայացված օրենսդրական բացերը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 991-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N 991-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի հրամանի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունել անհրաժեշտ չէ:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 991-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N 991-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի հրամանի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՔՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի Քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 327-րդ հոդվածից հանել «, վարժական հավաքներից» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

✓ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն. «Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից, վարժական հավաքից կամ զորավարժանքից խուսափելը՝ այդ ծառայությունից ազատվելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում՝ պատժվում է…»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 213.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պահեստազորում հաշվառված զինապարտ քաղաքացիների կողմից վարժական հավաքներից խուսափելը, որը կատարվել է զինկոմիսարիատի կողմից տրված ծանուցագրում նշված ժամկետում առանց հարգելի պատճառների զինկոմիսարիատ չներկայանալու ձևով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:

Ստացվում է, որ օրենսդիրը սահմանել է նույն արարքի համար կրկնակի պատասխանատվություն:

ՀՀ սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական

պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումները իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում:

Առաջարկվող կարգավորման բնույթը

Անհրաժեշտ է 327-րդ հոդվածում կատարել փոփոխություն, քանի որ վարժական հավաքից խուսափելու համար արդեն իսկ սահմանված է վարչական պատասխանատվություն:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է կարգավորել ոլորտում առկա, սույն հիմնավորմամբ ներկայացված օրենսդրական բացերը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունել անհրաժեշտ չէ:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

««Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԶԻՆԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի սեպտեմբերի 16-ի № ՀՕ-250 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մաս.

«3. Զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի բժշկական ու ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող մարմինների որոշումները և եզրակացությունները կազմված են ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից: Որոշումները և եզրակացություններն առնվազն պետք է պարունակեն տեղեկություններ զինապարտի առողջական վիճակի նկարագրության, զինապարտի պիտանիության աստիճանի, առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանների, զինվորական ծառայության պիտանիության որոշման կայացման իրավական հիմքերի, որոշման բողոքարկման ժամկետների և կարգի մասին»:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մաս.

«9. Սույն հոդվածի 7-րդ մասի «բ» կետով սահմանված, ինչպես նաև երկկողմանի ծնողազուրկ կամ չորս և ավելի երեխաներ ունեցող ծնողների զավակ հանդիսացող, ինչպես նաև ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքի զավակ հանդիսացող և պարտադիր զինվորական ծառայության զորակոչվող եղբայրը, իր ցանկությամբ, ծառայության է զորակոչվում պարտադիր ժամկետային զինվորական

ծառայության մեջ գտնվող եղբոր զորամաս, եթե վերջինիս պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվելու ժամկետը չի գերազանցում 18 ամիսը:»:

Հոդված 3. Օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասում «մեկամսյա» բառը փոխարինել «երկամսյա» բառով, իսկ «կարգով:» բառից հետո լրացնել «Հանրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից որոշումն ընդունելուց հետո եռօրյա ժամկետում այն հանձնվում է հասցեատիրոջը» նախադասությամբ:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

««ԶԻՆԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

✓ Օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված է այն անձանց շրջանակը, ովքեր պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ժամանակ, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայության ընթացքում օգտվում են բնակության վայրին մոտ գտնվող զորամասում ծառայելու արտոնությունից:

Նույն հոդվածի 8-րդ մասը սահմանում է, որ հայտարարված զորակոչի ընթացքում պարտադիր զինվորական ծառայության զորակոչվող եղբայրները, իրենց ցանկությամբ, ծառայության են զորակոչվում միևնույն զորամաս:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են դիմումներ՝ տարբեր ժամանակահատվածներում զորակոչվող եղբայրներին միևնույն զորամաս զորակոչելու վերաբերյալ: Զորակոչիկների ընտանիքների անդամները մտահոգություն են հայտնել այն մասին, որ սոցիալական ծանր վիճակի պատճառով կամ առողջական խնդիրներից ելնելով (հաշմանդամություն ունեցող ընտանիքների անդամներ)՝ հնարավորություն չեն ունենա այցելելու տարբեր զորամասեր զորակոչված իրենց որդիներին:

✓ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին պարբերության համաձայն՝ Հանրապետական զորակոչային հանձնաժողովի որոշումները, դրանց ընդունման օրվանից մեկամսյա ժամկետում, կարող են գանգատարկվել դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի

կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Հետևաբար, հանրապետական զորակոչային հանձնաժողովի՝ առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու, բուժման կամ պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանիության կապակցությամբ տարկետում տալու մասին որոշումները հանդիսանում են վարչական ակտեր, քանի որ դրանք ընդունվում են զինապարտ քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու, բուժման կամ պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանիության կապակցությամբ տարկետում տալու նպատակներով, նրանց համար սահմանում են իրավունքներ և պարտականություններ: Ընդ որում՝ դրանք կարող են հանդիսանալ ինչպես բարենպաստ և միջամտող, այնպես էլ զուգորդվող վարչական ակտեր («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մաս):

Իսկ վարչական ակտերի՝ դատարան բողոքարկման ժամկետները սահմանված են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով: Այսպես, Օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները): Օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջների համաձայն՝ վիճարկման հայցը դատարան կարող է ներկայացվել վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

Նման իրավակարգավորումների առկայության պայմաններում անձը կարող է վարչական ակտը վիճարկել դատական կարգով երկամսյա ժամկետում, մինչդեռ, «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին պարբերության համաձայն՝ մեկամսյա ժամկետը լրանալուց հետո բողոք ներկայացնելու դեպքում անձի բողոքը կարող է համարվել ժամկետանց:

Ասվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին պարբերությունը հակասում է ՀՀ վարչական դատավարության

օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին: Իսկ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին:

✓ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ զինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին թիվ (2010)4 հանձնարարականի համաձայն՝ զինված ուժերի անդամներն ունեն առողջության պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք:

Մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, իրավական, տնտեսական և ֆինանսական հիմունքները սահմանված են «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների գերակշիռ մասն առնչվել է զորակոչի ընթացքում զինապարտներին պատշաճ բժշկական հետազոտության ենթարկելու, բժշկական և ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների որոշումների (եզրակացության) արդյունքների հիմնավորվածությամբ պայմանավորված այդ որոշումների բողոքարկման և պարտադիր զինվորական ծառայության զորակոչից առողջական վիճակի պատճառով տարկետման իրավունքների տրամադրման խնդիրներին:

Օրինակ՝ զինապարտ քաղաքացին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով տեղեկացրել է, որ 2014 և 2015 թվականներին բուժման նպատակով պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչից ստացել է տարկետում՝ 10 ամիս ժամկետով:

Դիմումատուի պնդմամբ՝ 2016 թվականի ամառային զորակոչի ժամանակ իր մոտ ախտորոշվել է «Օրգանական ծագման էմոցիոնալ անկայուն ասթենիկ խանգարում՝ չափավոր արտահայտված» հիվանդությունը, սակայն Կենտրոնական բժշկական հանձնաժողովի

կողմից հաշվի չի առնվել իր հիվանդության ծանրության աստիճանը, և չի կիրառվել ՀՀ պաշտպանության նախարարի 2013 թվականի ապրիլի 8-ի «Զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2010 թվականի փետրվարի 26-ի թիվ 175-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 410-Ն հրամանով հաստատված՝ «Զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգ»-ի (այսուհետ՝ Փորձաքննության կարգ) 2-րդ հոդվածի «բ» կետը (պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են զինվորական ծառայության՝ սահմանափակումով, պատերազմական ժամանակ):

Նշված դիմումի ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ դիմումատուն համաձայն է եղել տրված ախտորոշման հետ, սակայն համաձայն չի եղել Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից ընդունված եզրակացության հիմնավորվածության հետ: Դիմումի քննարկման ընթացքում ուսումնասիրվել են դիմումատուի ներկայացրած բժշկական փաստաթղթերը և պարզաբանումներ պահանջվել: Արդյունքում՝ ՀՀ պաշտպանության նախարարությունից տեղեկացրել են, որ 2016 թվականի հուլիսի 2-ին զինապարտ քաղաքացին ներկայացվել է Կենտրոնական բժշկական հանձնաժողովի նիստին: Զորակոչիկը զննվել է բժիշկ փորձագետների կողմից, հաստատվել է վերը նշված ախտորոշումը, սակայն կիրառվել է Փորձաքննության կարգի 7-րդ հոդվածի «գ» կետը, և զորակոչիկը ճանաչվել է «պիտանի չէ զինվորական ծառայության համար խաղաղ ժամանակ» և հաշվառվել պահեստազորում:

Նշված բողոքի, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բազմաթիվ այլ բողոքների շրջանակներում ներկայացված ռազմաբժշկական և բժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների որոշումների, եզրակացությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործող իրավակարգավորումներով հստակ սահմանված չեն հանձնաժողովների կողմից կայացվող որոշումներին (եզրակացություններին) ներկայացվող պահանջները և դրանցում պարտադիր ներառվող տեղեկությունների շրջանակը:

Մասնավորապես՝ Փորձաքննության կարգի հավելվածի 8-րդ և 9-րդ գլուխներով սահմանված են ռազմաբժշկական (բժշկական) հանձնաժողովների որոշումների ձևերը և որոշումները գրանցելու կարգը: Այնուամենայնիվ նշված գլուխներում ներառված դրույթները չեն սահմանում հանձնաժողովների որոշումներին ներկայացվող այնպիսի պահանջներ, ինչպիսիք են որոշումների (եզրակացությունների) կառուցվածքը (նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ), բողոքարկման օրենքով սահմանված կարգի և ժամկետների մասին նշում կատարելը, դրանց հիմնավորված և պատճառաբանված լինելը, պարտադիր ներառվող տեղեկությունների շրջանակը և այլն:

Վերը նշված խնդրին փորձ է կատարվել լուծում տալ «Զինապարտության և զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծով: Այսպես՝ նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ զինապարտի բժշկական փորձաքննության արդյունքներով զինվորական կոմիսարիատին կից բժշկական և կենտրոնական բժշկական հանձնաժողովների կողմից տրվում է զինապարտի առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն, որը ներառում է՝ զինապարտի առողջական վիճակի ամփոփ նկարագրությունը, զինապարտի պիտանիության աստիճանը զինվորական ծառայությանը և զինվորական ծառայության պայմանները, որոնք հակացուցված են զինապարտի առողջական վիճակին՝ նրան զինվորական ծառայության մեջ ներգրավելու դեպքում:

Այսպիսով՝ ՀՀ զինապարտ քաղաքացիների վերաբերյալ ռազմաբժշկական և բժշկական փորձաքննության արդյունքներով կայացված որոշումների հիմնավորվածության, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերի, բողոքարկման կարգի և ժամկետների ու այլ պարտադիր նշումների, ինչպես նաև հստակ կառուցվածքի առկայությունն անհրաժեշտ և կարևոր են զինապարտների իրավունքների պաշտպանության ապահովման տեսանկյունից:

ՀՀ պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2016 թվականի ընթացքում դատական կարգով բողոքարկվել է Հանրապետական զորակոչային հանձնաժողովի 4, Կենտրոնական բժշկական հանձնաժողովի 3 և Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի 2 որոշում, բողոքարկումները գտնվում են

դատաքննության փուլում: Կենտրոնական բժշկական հանձնաժողովի և զինվորական կոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովների կողմից կայացված որոշումների վերաբերյալ ներկայացվել են 957 դիմում-բողոք, բողոքարկման արդյունքում փոփոխվել է ընդամենը 75-ի վերաբերյալ նախկինում տրված եզրակացությունները:

Առաջարկվող կարգավորման բնույթը

✓ Նախագծով առաջարկվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչվող եղբորը, իր ցանկությամբ, զորակոչել պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող եղբոր զորամաս, եթե՝

1. առկա է Օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի «բ» կետով սահմանված պայմանը, այն է՝ զորակոչիկն ունի ՀՀ սահմանների պաշտպանության, զինված ուժերում և այլ զորքերում ծառայության ընթացքում, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում ծառայողական պարտականություններ կատարելիս զոհված (մահացած) հայր (մայր) կամ եղբայր (քույր).

2. առկա է Օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի «դ» կետով սահմանված պայմանը, այն է՝ զորակոչիկը երկկողմանի ծնողազուրկ են.

3. զորակոչիկի ընտանիքը փաստագրված է (հաշվառված է) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում.

4. զորակոչիկը չորս և ավելի երեխաներ ունեցող ծնողների զավակ է:

Միևնույն ժամանակ առաջարկվում է վերը նշված արտոնությունը կիրառել միայն այն զորակոչիկների նկատմամբ, ում եղբայրը պարտադիր զինվորական ծառայության մեջ է գտնվում 18 ամսից ոչ ավելի ժամկետով:

Առաջարկվում է Օրենքի 11-րդ հոդվածը լրացնել նոր մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «9. Սույն հոդվածի 7-րդ մասի «բ» կետով սահմանված, ինչպես նաև երկկողմանի ծնողազուրկ կամ չորս և ավելի երեխաներ ունեցող ծնողների զավակ հանդիսացող, ինչպես նաև ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքի

զավակ հանդիսացող և պարտադիր զինվորական ծառայության զորակոչվող եղբորը, իր ցանկությամբ, զորակոչել պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող եղբոր զորամաս, եթե վերջինիս պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվելու ժամկետը չի գերազանցում 18 ամիսը:»:

✓ Առաջարկվում է Օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասում «մեկամսյա» բառը փոխարինել «երկամսյա» բառով:

Անհրաժեշտ է նաև Օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրել Հանրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից որոշումն ընդունելուց հետո որոշման օրինակը եռօրյա ժամկետում հասցեատիրոջը ուղարկելու պարտականություն:

✓ Անհրաժեշտ է սահմանել ռազմաբժշկական և բժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների կողմից կայացվող որոշումներին (եզրակացություններին) ներկայացվող պահանջները և դրանցում պարտադիր ներառվող բողոքարկման կարգի ու ժամկետների և այլ տեղեկությունների շրջանակը, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել նշված հանձնաժողովների գործունեության թափանցիկությունը բարձրացնելու ուղղությամբ:

Այսպիսով, առաջարկվում է «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում ամրագրել, որ զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի բժշկական ու ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող մարմինների որոշումները և եզրակացությունները կազմված են ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից: Որոշումները և եզրակացություններն առնվազն պետք է պարունակեն տեղեկություններ զինապարտի առողջական վիճակի նկարագրության, զինապարտի պիտանիության աստիճանի, առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանների, զինվորական ծառայության պիտանիության որոշման կայացման իրավական հիմքերի, որոշման բողոքարկման ժամկետների և կարգի մասին:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է կարգավորել ոլորտում առկա, սույն հիմնավորմամբ ներկայացված օրենսդրական բացերը:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԶԻՆԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունել անհրաժեշտ չէ:

ՏԵՂԵԿԱՆՔ

ԿԿԶԻՆԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ԿԿԶինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: